ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 հունվարի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

8
(3039)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵՐ ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԳՈՐԾԻՆ ԸՆԹԱՑՔ ՏՐՎԵՑ

ԱԺ նախկին պատգամավոր Նահապետ Գեւորգյանի որդու հարցով զբաղվում է քննչական կոմիտեն:

Հունվարի 16-ին «Ժողովուրդ» օրաթերթը հարց էր բարձրացրել ՆԳ նախարար Արփինե Սարգսյանին՝ արդյոք նա վախենում է «բանդիտներից»: Մասնավորապես «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողն ասել էր. ««Ես չեմ կարող թույլ տալ, որ որեւէ մեկն ինձ ասի՝ թույլ, ուրեմն թույլ են ուժային կառույցները...» այս հայտարարությունից հետո Նիկոլ Փաշինյանը ուժային մի շարք կառույցների ղեկավարների, այդ թվում եւ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանին ՍՄՍ գրեց, որ հեռանան պաշտոնից: Նշանակվեցիք դուք, որպեսզի, բնականաբար, ուժեղացնեք կառույցը: Բայց դուք մի քանի շոուներով եք աչքի ընկել. ինչ-որ մարդկանց «շարասյուներ» կանգնեցնել, պառկեցնել ասֆալտին, թափ տալ շորերն ու տուն ուղարկել: Իմ հարցը կոնկրետ է, տիկին նախարար. նախկին պատգամավոր Նահապետ Գեւորգյանի որդին ակնհայտորեն գազագողությամբ է զբաղվում, հարկային ծառայությունն անկարող է վերահսկել, տեսուչները չեն կարողանում մոտենալ՝ գազի հաշվիչների տվյալները վերցնելու: Կարճ ասած՝ բանդա է գործում պետության ներսում: Ու սա «Ժողովուրդ» օրաթերթը չի ասում. լրատվամիջոցները ամիսներ շարունակ աղաղակում են: Տեղյակ չե՞ք: Օրերս նույն նահապետ Գեւորգյանի որդուն ցուցադրաբար ձերբակալեցիք ու շատ արագ բաց թողեցիք: Վախենո՞ւմ եք՝ մամուլի ասած «բանդիտների» դեմ պայքարեք. ինչ ուզում՝ անում են, թե՞ պետությանը ձեռնտու են գազագողության այդ մասշտաբները»:

Եվ ահա մեր այս բարձրաձայնումից հետո ՆԳՆ նախարար Արփինե Սարգսյանը որոշել է գործին ընթացք տալ: ՆԳՆ-ից մեզ հայտնեցին. «ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳ վարչության Արմավիրի մարզային վարչությունում ստացված տեղեկությունով՝ խուլիգանության փաստով կազմվել են փաստաթղթեր եւ ուղարկվել Վաղարշապատի քննչական բաժին»:

Հայաստանի՝ ԵՄ անդամակցության հարցը դեռ անորոշ է, բայց այսօր արտախորհրդարանական ուժերի՝ «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքի նախագիծը կքննարկվի Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ քննարկմանը մասնակցելու են ԱԺ պատգամավորներ, նախաձեռնող խմբի ներկայացուցիչները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականները մտադիր են «կանաչ լույս» տալ նախաձեռնության հետագա ընթացքի համար՝ դրական եզրակացություն տալով դրան: Դեռ ամիսներ առաջ Նիկոլ Փաշինյանը կտրուկ դեմ էր հանրաքվեին, այնինչ հիմա, փաստորեն, լրիվ այլ տրամադրություններ են: Իսկ ինչո՞վ է պայմանավորված ՔՊ-ականների այս կտրուկ «կերպարանափոխությունը»: Իշխանամերձ աղբյուրների դիտարկմամբ՝ նախ իշխանությունները ընտրություններից առաջ չեն ուզում նոր հակառակորդներ ձեռք բերել՝ ի դեմս արտախորհրդարանական ուժերի, որոնք նախաձեռնել են այս գործընթացը: Բանն այն է, որ Փաշինյանն արդեն հաշվարկել է, որ ընտրությունների ցանկացած ելքի դեպքում իր սատելիտ արտախորհրդարանական ուժերը կարող են իրեն պետք գալ ու չի ցանկանում նրանց հետ թշնամություն անել՝ մերժելով նախաձեռնությունը: Սրանից բացի, իշխանության մյուս հաշվարկն այն է, որ հատկապես պատերազմից հետո մեր հանրության մեծ մասի հայացքներն ուղղված են դեպի Եվրոպա ու ընտրությունների այս գործընթացը սկսելը կամրապնդի իրենց դիրքերը:

Ինչու են դատավորները նախկին պաշտոնյաների նկատմամբ հարուցված քրեական գործերով դատական նիստ նշանակում, իսկ այն չի կայանում: Հակակոռուպցիոն դատարանում երեկ չկայացավ Վաչագան Ղազարյանի գործով նիստը, քանի որ դատավոր Տիգրան Դավթյանը վերապատրաստման է: Հակակոռուպցիոն դատարանում չկայացավ նաեւ էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի նկատմամբ հարուցված քրեական գործով նիստը: Ու մինչ ՀՀ դատական համակարգը տարբեր պատճառաբանություններով նիստեր է հետաձգում, նախկին պաշտոնյաները իրենց ոտնահարված իրավունքների հարցը բարձրացնում են այլ ատյաններում: Երեկ հայտնի դարձավ, որ Վահան Քերոբյանը իր դեմ հարուցված քրեական գործով դիմել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարան:



Համաձայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվության՝ նախաձեռնված վարույթների ընթացքում 25 անձ տուգանվել է 200 հազար ՀՀ դրամի չափով: 2024 թվականին ուղարկվել է 231 ծանուցում, 226-ը՝ պաշտոնատար անձանց, իսկ 5-ը՝ նրանց ընտանիքի անդամներին: 2024 թվականին եւ նախորդ տարի ուղարկված ծանուցումների եւ նախաձեռնված վարույթների արդյունքում ներկայացվել է 322 հայտարարագիր՝ 264-ը պաշտոնատար անձանց կողմից, իսկ 58-ը՝ նրանց ընտանիքի անդամների: Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրերը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու առնչությամբ հարուցված վարույթներից եզրափակվել է 323-ը: Դրանցից 25-ը եզրափակվել է «200 հազար ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու մասին» որոշումների ընդունմամբ: 298 գործերով համապատասխան հայտարարատու անձանց հայտարարվել է բանավոր դիտողություն՝ կարճելով գործերի վարույթը արարքի նվազ նշանակության հիմքով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին վարույթներ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CPC ARMENIA

ԶՐՈՒՅՑ

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ ԱՆԱԽԱԴԵՊ ՉԵՆ», ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վիրուսները շարունակում են զրոհել: 2025 թվականի հունվար ամսվա երկրորդ շաբաթվա տվյալների համաձայն՝ սուր շնչառական վարակների աճ է գրանցվել:

Թե՛ մեծահասակների, թե՛ 0-18 տարեկանների շրջանում նկատվում է սեզոնային գրիպի, թոքաբորբի դեպքեր:

Առողջության առաջնային պահպանման կազմակերպություններ հունվարի երկրորդ շաբաթվա ընթացքում դիմել են 7278 բուժառու:

Թեմայի վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է «Առողջության իրավունք» ՀԿ-ի համանախագահ Ծաղիկ Վարդանյանի հետ:

-Տիկին Վարդանյան, ինչի՞ հետեւանքով են գրանցվել սուր շնչառական վարակների նման քանակությամբ դեպքեր:

-Մենք հիմա սեզոնային գրիպի ակտիվացման շրջանում ենք գտնվում եւ մոտավորապես նախատեսվում էր նախորդ՝ 2024 թվականի ակտիվության նման տարի: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում մեր տարածաշրջանի համար նախատեսվել էին այդպիսի թվեր: Այս պահին ակտիվացումը բնակլիմայական պայմանների, ինչպես նաեւ շփումների արդյունքն է, քանի որ երեխաները գնում են դպրոց, մանկապարտեզ եւ այդ շտամերի խումբն ավելի շատ է լինում: Եթե արձանագրենք, որ սա աննախադեպ է, ապա այդպես չէ: Սա սեզոնային գրիպի տարածվածության թույլատրելի սահմանն է: Բայց այս հանգամանքը չի նշանակում ոչինչ չանել, անպայման է կանխարգելիչ բոլոր միջոցները իրականացնել:

-Որո՞նք են այդ կանխարգելիչ միջոցները:

-Անձնական հիգիենայի միջոցների պահպանումն է՝ առաջին հերթին ձեռքերի լվացումը, մաքուր պահումը, շփման մեջ շատ չողջագուրվելը, չափից դուրս սերտ շփումները նվազեցնելը, հիվանդ վիճակում այլ անձանց հետ շատ չշփվելը, հնարավորինս ինքնամեկուսացումը, աշխատանքային գործունեությունը դադարեցնելն ու տանը մնալը:

-Այսինքն՝ այս կերպ կարելի է խուսափե՞լ սեզոնային վիրուսներից:

-Այս կերպ ամբողջապես խուսափել, բնականաբար չենք կարող, բայց մասամբ կարող ենք վարակվելու հավանականությունը իջեցնել: Եթե նորմայում մեկ վարակված անձը վարակում է 2 կամ 3 հոգու, մենք կարող ենք այն սահմանափակել 1-ով: Սա կբերի սեզոնային գրիպի որոշակի սահմանափակման: Ավելի ճիշտ, կառավարելի տարբերակն է սեզոնային գրիպի դեմ պատվաստումների իրականացումը, որն այս փուլում մի փոքր հայտնի չէ՝ ինչքանով էֆեկտիվ կլինի: Կառավարելի վարակի տարբերակներից են պատվաստումները, իսկ հաջորդը՝ անձնական հիգիենայի եւ շրջապատի հետ շփման հիգիենայի պահպանությունը, եւ երրորդը՝ արագ դիմելը բժշկին. չպետք է թույլ չտալ, որպեսզի բարդություններ լինեն: Դեռ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին առողջապահության համաշխարհային կազմակերպությունը փաստում էր, որ կոնկրետ այս սեզոնի համար քառավալենտ վակցինաներ են սպասվում, քանի որ շտամները մի քանիսն են, որոնք շրջանառվում են:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՐՑՆ ԻՄ ԱՄԵՆՕՐՅԱ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ Է. Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ազգային Ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը ֆեյսբուքյան էջում գրում է. «Ռիգայում գտնվելու օրերին, երբ մասնակցում էի ռազմավարական հաղորդակցությունների թեմայով կազմակերպված սեմինարներին, առիթ ունեցա հանդիպելու Լատվիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Պոլ Բրամմելին (H.E. Mr. Paul Brummell): Զրույցը շատ արդյունավետ եւ ջերմ էր: Քննարկեցինք մի շարք հարցեր՝ կապված տարածաշրջանում առկա իրավիճակի հետ:

Օգտվելով առիթից՝ խնդրեցի դեսպանին, որպես միջազգային հանրության ներկայացուցիչ իր ուշադրության կենտրոնում պահել Բաքվի բանտում գտնվող հայ ռազմագերիների նկատմամբ իրականացվող անարդար դատավարության եւ դրա թափանցիկության հարցը:

Հայ գերիների վերադարձի հարցն իմ ամենօրյա աշխատանքի անբաժանելի մասն է: Եվ ես օգտագործում եմ բոլոր հնարավոր ու անհնար միջոցները՝ հասնելու նրանց տունդարձին»,- գրել է նա:

ՍԱՀՄԱՆԻՆ ԱՆՎՏԱՆԳ Է

Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայությունը հրապարակել է Հայաստանի Հանրապետության արտաքին ռիսկերի վերաբերյալ 2025 թվականի տարեկան զեկույցը՝ հայերեն եւ անգլերեն: Մասնավորապես, «Ռազմաքաղաքական ռիսկեր» բաժնում գրված է. «Տարբեր փաստերի, տեղեկությունների ու երեւույթների վերլուծության հիման վրա սույն զեկույցի հրապարակման պահի դրությամբ Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ լայնամասշտաբ ռազմական հարձակման հավանականությունը բարձր չենք գնահատում: Միաժամանակ, պայմանագրահենք խաղաղության եւ միջպետական հարաբերությունների բացակայության պայմաններում որպես Հայաստանի դեմ ուժի սպառնալիքի ադրբեջանական քաղաքականության գործիքակազմի մաս, կշարունակի պահպանվել սահմանին տեղային լարվածությունների եւ էսկալացիայի առաջացման ռիսկը, որի որոշակի նվազեցման երաշխիք կարող է լինել 2024 թվականից մեկնարկած սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի սահուն շարունակությունը՝ համաձայն երկուստեք հաստատված ընթացակարգի:

Այս համատեքստում Ծառայության խնդիրն է շարունակաբար գնահատել, թե արդյոք Ադրբեջանի կողմից Հայաստանի անկախության, ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ տարբեր վնասակար խոսույթների հետեւողական զարգացումը եւ ֆինանսավորումը Հայաստանի դեմ ուժի կիրառման սեփական մտադրության «լեգիտիմացման» դրսեւորում է: Այդ խոսույթներից են այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջանի եւ արեւմտյան ադրբեջանցիների», «Հայաստանի ռազմականացման», «ռեւանշիզմի», «Զանգեզուրի միջանցքի» խոսույթները:

ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ԴԵՄ ՎԱՐՈՒՅԹ ԿՆԱԽԱՁԵՌՆՎԻ

Փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը գրում է. «Եվրոպական դատարանը «Սուրեն Անտոնյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռում փաստացի արձանագրել է, որ դատավոր Անտոնյանի վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը եղել է կանխակալ եւ այդպիսով ինքնաբացարկ չի հայտնել, դրա արդյունքում, փաստորեն, դատավորը հեռացվել է դատական համակարգից: Իհարկե, Եվրոպական դատարանը պարտավորեցրել է վերաբացել այդ գործը, բայց ակնհայտ է, որ ԲԴԽ նախկին նախագահ Կարեն Անդրեասյանի արարքում առկա են առերեւույթ հանցագործության հատկանիշներ եւ այն պետք է արժանանա պատշաճ քրեաիրավական գնահատականի:

Պարզ է, որ նույն սուբյեկտի անձնական քինախնդրությամբ հեռացված մյուս դատավորների մասով եւս շուտով ստացվելու են Եվրոպական դատարանի՝ հանցակազմ առաջացնող այլ դատական ակտեր, բայց այս պահին Կարեն Անդրեասյանի նկատմամբ քրեական վարույթ նախաձեռնելու բավարար հիմքերն արդեն իսկ առկա են», - գրել է նա:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԻՆՏԵՆՍԻՎ ՁՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՏԱՀՈԳԻՉ ԵՆ

ՀԱՊԿ-ի հետ կապված որեւէ որոշում չի կարող գաղտնի լինել, լրագրողների հետ զրույցում հայտարարեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

«Մենք իրավիճակը գնահատում ենք ու ըստ դրա ենք որոշում կայացնում»,- նշեց նա:

Ըստ քարտուղարի խոսքով՝ Հայաստանը չի տորպեդահարում ՀԱՊԿ-ում որոշումների կայացման գործընթացը:

««ՀԱՊԿ-ի հետ կապված՝ մենք կայացրել ենք քաղաքական որոշում ու այդ որոշումները հրապարակային են: Եթե որեւէ փոփոխություն լինի՝ կտեղեկանաք», - հավելեց նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹՐԱՄՓԻ ՆՈՐ ՀՐԱՄԱՆԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը ստորագրել է գործադիր հրաման, որով Եմենի հութի ապստամբները, որոնք պաշտոնապես հայտնի են որպես «Անսար Ալլահ», սահմանվում են որպես «օտարերկրյա ահաբեկչական կազմակերպություն», հայտարարել է Սպիտակ տունը:

Թրամփի նախորդի՝ Ջո Բայդենի օրոք հութիները ներառվել էին «հատուկ նշանակության համաշխարհային ահաբեկչական կազմակերպությունների» ցուցակում: Սա ավելի քիչ սահմանափակող դասակարգում է: Մինչդեռ Թրամփի որոշումը նպատակ ունի վերականգնել օտարերկրյա ահաբեկչական կազմակերպության ավելի խիստ եւ սահմանափակող կարգավիճակը:

«ԹԱՆԿ» ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Կիեւի պարտությունը ՆԱՏՕ-ին կարժենա ոչ թե լրացուցիչ միլիարդավոր դոլարներ, որոնք դաշինքը ներկայումս հատկացնում է ռազմական կարիքների համար, այլ լրացուցիչ տրիլիոն դոլարներ, հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեն՝ ելույթ ունենալով Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակում Ուկրաինային նվիրված միջոցառմանը:

250 ՄԼՐԴ ԴՈԼԱՐԻ ՎՆԱՍ՝ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Նոր հզոր անտառային հրդեհ է բռնկվել Կալիֆոռնիայի Լոս Անջելես գավառում, որը գտնվում է ԱՄՆ-ի արեւմուտքում՝ ընդգրկելով ավելի քան 20 քառակուսի կիլոմետր տարածք: Այս մասին հայտնում են Reuters ու CNN-ը:

Չորեքշաբթի օրը ընդամենը մի քանի ժամվա ընթացքում նոր հրդեհն ավերել է Լոս Անջելեսի տարածքը:

Հրդեհի տարածման սպառնալիքի պատճառով իշխանությունները հայտարարել են Կաստեյք լճի շրջակա տարածքների բնակիչների պարտադիր տարհանման մասին: Ուժեղ քամին օգնում է տարածել կրակը, հայտնում է Ազգային օդերեւութաբանական ծառայությունը: Հրդեհը սպառնում է խիտ բնակեցված տարածքներին:

Պաշտոնյաները նախազգուշացրել են Լոս Անջելեսի շրջանի Կաստայիկ լճի շրջանում ապրող մարդկանց, որ նրանք բախվում են «կյանքի համար անմիջական վտանգի», մինչդեռ Հարավային Կալիֆոռնիայի մեծ մասը մնում է կարմիր գոտում՝ ուժեղ, չոր քամիների պատճառով հրդեհի ծայրահեղ վտանգի տակ:

Լոս Անջելեսի շրջանի շերիֆ Ռոբերտ Լունան մամուլի ասուլիսում ասել է, որ մոտ 31,000 մարդ ենթարկվել է պարտադիր տարհանման:

Կալիֆոռնիայում անտառային հրդեհներ են մոլեգնում. Նրանք սկսեցին տարածվել Լոս Անջելեսի շրջանում հունվարի 7-ին: Շրջանում հրդեհների ընդհանուր մակերեսը գերազանցել է 16 հազար հեկտարը:

Հրդեհը ոչնչացրել է ավելի քան 12,300 շենք, այդ թվում՝ հայտնի մարդկանց սեփականություն: Վերջին տվյալներով՝ զոհվել է 25 մարդ: Հրդեհների տնտեսական վնասը գերազանցում է 250 միլիարդ դոլարը:

ՈՎՔԵՐ ԵՆ ՄՏԱԴԻՐ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ՝ ԿՌՎԱԽՆՁՈՐ ՔՊ-ԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը երեկ ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրեց առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանին: Նշենք, որ վերջինիս պաշտոնավարման ընթացքը բավականին սկանդալներով է ուղեկցվել:

Նախարար եղած ժամանակ «Covid-19»-ի դեմ պայքարի ընթացքում Առողջապահության նախարարության աշխատակիցների իրականացված յուրացումների, ոչ արդյունավետ ծախսերի վերաբերյալ լուրեր էին շրջանառվում Թորոսյանի շուրջ: Յուրացումների փաստով քրեական գործ էր հարուցվել, կալանավորել էին նախարար Թորոսյանի տեղակալին, այլ պաշտոնյաների: Արսեն Թորոսյանի՝ Հանձնաժողովի նախագահ ընտրվելուց հետո թափուր է մնում նրա տեղակալի՝ Հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնը:

ՔՊ-ական պատգամավոր Լուսինե Բաղալյանը, ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի արդեն նախկին նախագահ Նարեկ Ջեյնալյանի հեռանալուց հետո իր թիմակիցներին հայտնել է՝ փոխնախագահի պաշտոնից հեռանալու մասին: Հիմա փաստորեն այդ պաշտոնը, այսպես ասած, ազատ է մնում, մինչեւ նոր թեկնածուներ առաջադրվեն եւ ՔՊ-ն հանձնաժողովի փոխնախագահ ընտրի:

«Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ գրել էր, որ այս պաշտոնը կռվախնձոր է դարձել ՔՊ-ական կանանց համար: Հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնի համար պայքարում են ՔՊ-ական պատգամավորներ Էմմա Պալյանը եւ «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի նախկին բուժքույր Հռիփսիմե Հունանյանը:

ՔՊ-ական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Էմմա Պալյանը խմբակցությունում ասել է, որ մտադիր է ինքնաառաջադրվել՝ որպես հանձնաժողովի փոխնախագահ ու հենց այդ հաշվարկով էլ նա Արսեն Թորոսյանին առաջադրել է նախագահ, որպեսզի Թորոսյանն էլ իրեն պաշտպանի՝ փոխնախագահ դառնալու համար:

Մինչդեռ, խմբակցության մեծ մասը այդ պաշտոնում ցանկանում է առաջադրել Հռիփսիմե Հունանյանին, որը գոնե բուժքույր է եղել, եւ քիչ թե շատ փորձ ունի բժշկական ոլորտում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ վերջինս համաձայնել է առաջադրվել Արսեն Թորոսյանի հնարավոր տեղակալի պաշտոնում՝ մեկ պայմանով, եթե Էմմա Պալյանը չառաջադրվի, քանի որ ինքը, ինչպես հայտարարել է, չի պատրաստվում մրցել Պալյանի հետ, որը Ալեն Սիմոնյանի «մարդն» է այդ հանձնաժողովում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Էմմա Պալյանն ասաց, թե դեռ որոշում չունի՝ առաջադրվելու է Արսեն Թորոսյանի տեղակալաի պաշտոնում, թե ոչ:

«Այդ թեմայով դեռ նիստ չենք արել, փոխնախագահի պաշտոնի հետ կապված որոշում չկա: Քանի պահը չի եկել խոսելու, առաջադրումների փուլում չենք, չեմ կարող ոչինչ ասել, հենց լինի՝ կհայտնեմ իմ որոշման մասին»,- ասաց Պալյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐԿԱՐԱՁԳՎԻ

Կառավարությունն իր երեկվա՝ հունվարի 23-ի նիստում, որոշեց եւս մեկ ամսով երկարաձգել 44-օրյա պատերազմում անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին 300-հազարական դրամի աջակցությունը:

Այդ ծրագրի ժամկետն ավարտվում է դեկտեմբերին, որոշվեց, որ հունվարին եւս զոհված զինծառայողների ընտանիքները կստանան այդ աջակցությունը:

Որոշման ընդունման դեպքում շահառու հանդիսացող թվով 22 անհայտ կորած զինծառայողի ընտանիքի աջակցության տրամադրման ֆինանսական հաշվարկը 2025 թվականի հունվար ամսվա համար կազմում է 6.600.000 ՀՀ դրամ: Անհրաժեշտ միջոցները նախատեսվում է ներգրավել 2025 թվականի պետական բյուջեով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների վերաբաշխումների հաշվին:

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՇԻՇԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Հունվարի 23-ին ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը Հյուսիսային Եվրոպա-Բալթյան երկրներ համագործակցության ձեւաչափի խորհրդարանների նախագահների ու փոխնախագահների հետ այցելել է Շիշեռնակաբերդի հուշահամալիր: Հայտնում ն ՀՀ ԱԺ-ից:

Նրանք ծաղիկներ են դրել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին, հարգանքի տուրք մատուցել Սուրբ նահատակների հիշատակին:

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԵՆ ԱՌԱՋԱԴՐԵԼ

Գլխավոր դատախազությունը «Մարտի 1-ի» գործով նոր մեղադրանք առաջադրեց 2008-ին պաշտպանության նախարար եղած Սեյրան Օհանյանին:

Նա մեղադրվում է ուժի գործադրմամբ պաշտոնեական լիազորություններն անցնելու համար:

Դատախազը Հակակոռուպցիոն դատարանում ներկայացրեց մեղադրանքը. «Օհանյանը, 2008թ. լինելով զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, այլ անձանց հանցակցությամբ կատարել է լիազորությունների շրջանակից ակնհայտ դուրս գտնվող գործողություններ, ինչն անզգուշությամբ հանգեցրել է ծանր հետեւանքների»:

Այս արարքի համար որպես պատիժ նախատեսված է 4-8 տարվա ազատազրկում:

Արդարացումից երեք տարի անց երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ նրա 3 նախկին բարձրաստիճան ենթակաները կրկին դատարանի առջեւ են կանգնել: Վճռաբեկ դատարանը բեկանեց դեռ օրինական ուժի մեջ չմտած արդարացման դատավճիռը եւ գործը հետ ուղարկեց Հակակոռուպցիոն քրեական դատարան՝ նոր քննության:

Հիշեցնենք, որ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանն ու ԳՇ նախկին պետ, ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովը մեղադրվում էին ՀՀ ՔՕ 300.1 հոդվածով (սահմանադրական կարգը տապալելը): ՀՀ ՍԴ-ն 2021 թ. մարտի 26-ին անվավեր եւ հակասահմանադրական ճանաչեց ՀՀ ՔՕ 300.1 հոդվածը, եւ նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվեց:

2021 թ. ապրիլի 6-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը բավարարեց Մարտի 1-ի գործով պաշտպանական կողմի միջնորդությունը՝ ՍԴ-ի որոշմամբ հակասահմանադրական ճանաչված 300.1 հոդվածով քրեական հետապնդումը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի ու ԳՇ նախկին պետ, ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի նկատմամբ դադարեցնելու մասին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՀԱՓՇՏԱԿԵԼ ԵՆ 810 ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա մի խումբ քաղաքացիներ 2022 թվականի մարտից 2023 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում ստեղծել եւ ղեկավարել են անդրազգային հանցավոր կազմակերպություն՝ իրականացնելով առանձնապես խոշոր չափերով համակարգչային հափշտակություն: Հանցավոր կազմակերպության կազմում ներգրավվել է առնվազն 144 անդամ, այդ թվում՝ անչափահասներ:

Նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ հանցավոր կազմակերպության մեջ ներգրավված անձինք ստեղծել եւ ուղղորդել են կեղծ բովանդակությամբ համացանցային կայքեր, սոցիալական ցանցերում իրականացրել են գովազդներ, վարձակալել են գրասենյակային տարածքներ, հանցավոր գործունեությունը քողարկելու նպատակով հաճախակի ստեղծել եւ փոփոխել են մտացածին ընկերությունների անվանումները եւ դրամական փոխանցումներ կատարելու համար կիրառվող բանկային հաշվեհամարները, կիրառել են արտասահմանյան վիրտուալ հեռախոսահամարներ, պոլիգրաֆ սարքով իրականացրել են նոր ներգրավվող աշխատակիցների ստուգումներ, աշխատակիցների տվյալների բացահայտումից խուսափելու համար նրանց տվել են կեղծանուններ եւ հերթական համարներ, հրահանգավորել են հնարավոր խնդիրների դեպքում համապատասխան վարքագծի կանոնների վերաբերյալ, տեղադրել եւ գործարկել են էլեկտրոնային տվյալների եւ այլ կրիչների ոչնչացման մեխանիզմներ:

Այսպիսով, հանցավոր կազմակերպության անդամները, կապ հաստատելով հիմնականում եվրոպական երկրների բնակիչների հետ եւ ներկայանալով որպես արհեստական բանականությամբ գործող հեղինակավոր ու մեծ եկամուտներ ապահովող միջազգային ներդրումային ընկերության աշխատակիցներ, կատարել են համակարգչային հափշտակություններ:

Կազմակերպության անդամները տուժողներին մոլորեցնելուց եւ նրանց վստահությունն ամրապնդելուց հետո վերջիններիս ուղղորդել են տարբեր չափերի գումարներ փոխանցել իրենց կողմից կառավարվող հաշվեհամարներին:

Արդյունքում, հանցավոր կազմակերպության անդամները ստացել են օտարերկրացի 1404 տուժողի՝ առանձնապես խոշոր չափերով՝ ավելի քան 810 մլն 71 հզր 577 ՀՀ դրամի ֆինանսական միջոցները տնօրինելու եւ օգտագործելու իրական հնարավորություն:

Հանցավոր կազմակերպության 1 ղեկավարի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը), 257-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (համակարգչային հափշտակությունը), 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (ապօրինի գործունեություն իրականացնելու կամ ապօրինի գործունեությունը քողարկելու նպատակով իրավաբանական անձ, դրա առանձնացված ստորաբաժանում, հիմնարկ ստեղծելը կամ օգտագործելը կամ նույն նպատակով անհատ ձեռնարկատեր հաշվառելը), 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (փողերի լվացումը), 1 այլ ղեկավարի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով (հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը), 257-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (համակարգչային հափշտակությունը), 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (ապօրինի գործունեություն իրականացնելու կամ ապօրինի գործունեությունը քողարկելու նպատակով իրավաբանական անձ, դրա առանձնացված ստորաբաժանում, հիմնարկ ստեղծելը կամ օգտագործելը կամ նույն նպատակով անհատ ձեռնարկատեր հաշվառելը), 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (փողերի լվացումը) եւ 16 անդամի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով (հանցավոր կազմակերպությանը մասնակցելը) եւ 257-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (համակարգչային հափշտակությունը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՐԻԳՈՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել երրորդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովի գործով: Դատարանը գործը մասերի է բաժանել ու քննելու է առանձին:

Ինչպես հայտնի է՝ 2023 թվականին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը 3-րդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովի նկատմամբ հանրային քրեական հետապնդում էր հարուցել՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքն օրինականացնելու (փողերի լվացման) համար:

Այս գործով 13 մեղադրյալ կա: Մեղադրյալ է նաեւ Պաշտպանության նախկին նախարար, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը:

Արդյունքում, Հակակոռուպցիոն դատարանը 1,5 տարի քննեց գործը ու նոր հասկացավ, որ այն պետք է առանձնացնի եւ առանձին քննի:

ԿՅԱՆՔԸ ՃԱՂԵՐԻ ՀԵՏԵՎՈՒՄ. ՄԱՍ 3

ArmLur.am-ը սկսել է շարք, որի ընթացքում իրավական ոլորտը լուսաբանող լրագրող Քնար Մանուկյանը կպատմի ՀՀ «Արմավիր» ՔԿՀ-ում գտնվող տղամարդկանց ճակատագրերի մասին:

Եվ այպես, հաղորդաշարի երրորդ մասում «Յանուս» թատրոնի գեղարվեստական ղեկավար Մուշեղ Մխիթարյանն է, ով 10 տարի է գտնվում է բանտում:

2015 թ. օգոստոսի 5-ին Երեւանի Մազմանյան 5 շենքի թիվ 20 բնակարանում հայտնաբերվել էր «6-րդ զգայարան» հաղորդաշարի էքստրասենս, 53-ամյա Անի Մաջնունյանի դին՝ բազմաթիվ ծակածկտրած վնասվածքներով:

53-ամյա էքստրասենսի սպանության դեպքով 2018 թվականի մարտի 5-ին Մուշեղ Մխիթարյանը դատապարտվեց 20 տարվա ազատազրկման:

Այս աղմկահարույց սպանությունից 2 տարի անց՝ 2017 թվականի հունվարի 8-ին, Մուսալեռում գազի արտահոսքից մահացած գտան էքստրասենս Անի Մաջնունյանի սպանության գործով կարեւորագույն վկային՝ Աննա Միսակյանին: Աննա Միսակյանն այս գործով առանցքային վկա էր համարվում, քանի որ էքստրասենսի սպանության ժամանակ, ինչպես ասել էր դատարանում, եղել էր մեղադրյալ Մուշեղ Մխիթարյանի հետ եւ տեսել, թե ինչպես է արնաքամ լինում Անի Մաջնունյանը:

Հարցազրույցը՝ ArmLur.am կայքում
Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԾԽԱԽՈՏԻ ԱՊՕՐԻՆԻ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ

Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնում տեղեկություններ են ստացվել, որ 49-ամյա մի տղամարդ էջմիածին քաղաքում իրականացնում է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն՝ ձեռք է բերում եւ վաճառում առանց համապատասխան դրոշմավորման եւ մակնշման ծխախոտներ:

Ոստիկանությունից հայտնում են, որ նշված հասցե մեկնած իրավապահների բանավոր հարցմանն ի պատասխան տղամարդը նշել է, որ խանութում ունի վաճառելու նպատակով պահած՝ առանց համապատասխան դրոշմավորման եւ առանց QR մակնշման ծխախոտներ եւ պատրաստ է ներկայացնել դրանք:

Նա ձերբակալվել եւ ներկայացվել է Վաղարշապատի քննչական բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում տղամարդը ներկայացրել է 869 տուփ առանց դրոշմանշի եւ մատնանշման տարատեսակ ծխախոտներ:

ԴԵՌԱՀԱՍԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՎՏԱՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ

Կրասնոդարի միջնակարգ դպրոցներից մեկում դանակով հասակակիցների վրա հարձակված դեռահասը ծնողների հետ վտարվել է Հայաստան, այս մասին «Կոմերսանտ»-ին հայտնել են Կրասնոդարի երկրամասի ՆԳՆ գլխավոր վարչության մամուլի ծառայությունից:

Ավելի վաղ Կրասնոդարի Պրիկուբանսկի դատարանը դպրոցականին մեղավոր էր ճանաչել զենքի գործադրմամբ խուլիգանության համար եւ դատապարտել 30,000 ռուբլի տուգանքի:

Կրասնոդարի թիվ 94 միջնակարգ դպրոցում միջադեպը տեղի է ունեցել անցյալ տարվա դեկտեմբերի 6-ին: Ուսումնական հաստատության միջանցքում աշակերտների միջեւ կոնֆլիկտի ժամանակ դեռահասներից մեկը հանել էր դանակը եւ հարվածել հասակակցի ոտքին:

Նրա ընտանիքի ստուգման ժամանակ պարզվել է, որ դեռահասի ծնողները՝ ՀՀ քաղաքացիները, ապօրինի են գտնվել Ռուսաստանում: Կարգադրիչներն ընտանիքին ուղեկցել են Միներալնիե Վոդի քաղաքի սահմանային հսկողության կետ, որից հետո դեռահասին եւ նրա ծնողներին չվերթով ուղարկել են Հայաստան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 22-ից 23-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 112 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ՏՆՕՐԵՆԻՆ

ՀՀ քննչական կոմիտեն հաղորդագրություն է տարածել Նոյեմբերյանի անտառտնտեսությունում պետությանը պատճառված 17 միլիոն 299 հազար 250 դրամի գույքային վնասի մասով հարուցված քրեական գործի մասին: Դրանում մասնավորապես ասված է. «Գ.Խ.-ն, պարտավոր լինելով ապահովել ՊՈԱԿ-ի մասնաճյուղի բնականոն գործունեությունը, մինչեւ 2021 թ. սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում անտառօգտագործման նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացրել, որի հետեւանքով անտառատնտեսության տարածքում ապօրինի հատվել է 500 ծառ՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս: 2025 թվականի հունվարի 15-ին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղի տնօրենի, երկու անտառապետի եւ վեց անտառապահի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին, որոնք բավարարվել են: 2025 թ. հունվարի 16-ին երկու անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետեւանք), յոթ անձի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական անփութությունը): Մեկ անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, մեկ անձի նկատմամբ կիրառվել են այլընտրանքային խափանման միջոցներ՝ տնային կալանք, բացակայելու արգելք եւ գրավ, երկու անձի նկատմամբ՝ պաշտոնավարման կասեցում եւ բացակայելու արգելք, երկու անձի նկատմամբ՝ բացակայելու արգելք եւ գրավ, երեք անձի նկատմամբ՝ բացակայելու արգելք»: Նշված չէ, թե ապօրինի հատված ծառերը ե՞րբ են հատվել, նշված է՝ «մինչեւ 2021 թ. սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում», երբվանի՞ց մինչեւ այդ ընկած ժամանակահատվածը: Հատված ծառերի թիվը 500 է, նման գործերում կլոր թվերը կասկածելի են: Նոյեմբերյանի անտառտնտեսության կալանավորված տնօրեն Գիգոլ Խասիկյանն իրեն մեղավոր չի համարում, նա ունի փորձառու փաստաբան: Նոյեմբերյանից հայտնեցին, որ տարեմուտից առաջ ստուգողները մանրազնին ստուգել են Նոյեմբերյանի անտառները, սակայն, խախտումներ չեն հայտնաբերել, ուստի որպես ապօրինի հատված ծառեր՝ գրանցել են մինչեւ 2021 թվականի սեպտեմբերի 15-ը հիմնականում քամուց տապալված, հաշվառված ծառերը: Նոյեմբերյանից հայտնում են, որ ստուգումներն իրականացրել է Եղվարդից Վաղարշակ Ամիրխանյանի գլխավորած խումբը, Ամիրխանյանը մտերիմ է ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանի հետ: Նոյեմբերյանում ասում են, որ Հայկ Սարգսյանը Նոյեմբերյանում անտառտնտեսություն նոր տնօրենի թեկնածու ունի, այդ պատճառով է կենտրոնացել Հայաստանում լավագույն անտառտնտեսություններից մեկի՝ Նոյեմբերյանի անտառտնտեսության վրա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Ո՞Ր ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ 300 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ ՇԵՄԸ

ՊԵԿ-ից ներկայացրել են՝ որ եկամուտներին է վերաբերում 300 հազար դրամ շեմը եւ որ դեպքում պետք է դրանք ներառել հայտարարագրում:

Հարց 1

300 հազար դրամ շեմը ո՞ր եկամուտներին է վերաբերում

300 հազար դրամի շեմը վերաբերում է նվիրատվությամբ, անհատույց, փոխառությամբ, գույքի օտարումից միանվագ ստացված ՉՀԱՐԿՎՈՂ եկամուտներին, այսինքն հարկվող եկամուտներին այս շեմը չի վերաբերում:

Հարց 2

300 հազար դրամի շեմը վերաբերում է մեկ գործարքին, թե՞ օրվա, ամսվա կամ տարվա ընթացքում կատարված գործարքներին

300 հազար դրամի շեմը վերաբերում է յուրաքանչյուր գործարքին, այլ ոչ թե օրվա, ամսվա կամ տարվա ընթացքում կատարված գործարքների հանրագումարին:

Հարց 3

Եթե Ձեզ որպես նվիրատվություն փոխանցվել է 300 հազար դրամ, արդյո՞ք պետք է հայտարարագրել այդ գումարը:

Այո, հայտարարագրում պետք է ներառել 300 հազար դրամ եւ ավելի գումարը: Այսինքն, եթե Ձեզ որպես նվիրատվություն փոխանցվել է հենց 300 հազար դրամ, ապա այդ գումարը պետք է ներառել հայտարարագրում:

Հարց 4

Ինչ անել, եթե նախքան 300 հազար դրամի շեմը սահմանելն արդեն իսկ 2025 թվականին ներկայացրել եք հայտարարագիր

Այն չհարկվող եկամուտները, որոնց համար սահմանվել են շեմեր, կարող են հայտարարագրում լրացվել ամբողջությամբ՝ անկախ այդ շեմերը (չափերը) գերազանցելու հանգամանքից: Հետեւաբար, ներկայացված հայտարարագրի հետ կապված լրացուցիչ գործողություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ չհարկվող եկամուտներից հարկի վճարման պարտավորություն չի առաջանում:

Հարց 5

Եթե Ձեր բանկային հաշվեհամարին կամ քարտին կատարվել է 300 հազար դրամից պակաս փոխանցում, արդյո՞ք պետք է հայտարարագրել այդ գումարը

Եթե հայտարարատու եք եւ 2024 թվականի ընթացքում Ձեր բանկային հաշվեհամարին կամ քարտին որպես նվիրատվություն միանվագ փոխանցված գումարը չի գերազանցում 300 հազար դրամը, ապա այդ եկամտի մասին տեղեկատվությունը հայտարարագրում կարող եք չներառել կամ ներառել Ձեր ցանկությամբ:

Հարց 6

Արդյո՞ք 300 հազար դրամի շեմը վերաբերում է արտերկրից ստացված նվիրատվության գումարներին

Այո, 300 հազար դրամ շեմը վերաբերում է նաեւ արտերկրից որպես նվիրատվություն ստացված եկամուտներին: Այսինքն, եթե հայտարարատու եք եւ 2024 թվականի ընթացքում արտերկրից Ձեզ որպես նվիրատվություն միանվագ փոխանցված գումարը չի գերազանցում 300 հազար դրամը, ապա այդ եկամտի մասին տեղեկատվությունը հայտարարագրում կարող եք չներառել կամ ներառել Ձեր ցանկությամբ:

Հարց 7

Արդյո՞ք պետք է հարկ վճարել, եթե ՀՀ տարածքից կամ արտերկրից փոխանցված գումարը գերազանցում է 300 հազար դրամի շեմը

Ոչ, 300 հազար դրամի շեմը վերաբերում է նվիրատվությամբ, անհատույց, փոխառությամբ, գույքի օտարումից միանվագ ստացված ՉՀԱՐԿՎՈՂ եկամուտներին: Այսինքն, եթե 2024 թվականի ընթացքում ՀՀ տարածքից կամ արտերկրից Ձեր բանկային հաշվեհամարին կամ քարտին որպես նվիրատվություն կատարվել են փոխանցումներ, որոնք գերազանցում են 300 հազար դրամը, ապա այդ եկամուտները հայտարարագրելով, որեւէ հարկային պարտավորություն չեք ունենա:

Հարց 8

Եթե գործարքի գումարը գերազանցում է 300 հազար դրամը, պետք է հայտարարագրում լրացնել միայն գերազանցո՞ղ մասի գումարը, թե՞ ամբողջը

Եթե 2024 թվականի ընթացքում որպես նվիրատվություն այլ քաղաքացուց միանվագ փոխանցվել է օրինակ՝ 400 հազար դրամ, ապա հայտարարագրում պետք է ներկայացնեք հենց 400 հազար դրամ եկամուտը:

Հարց 9

Արդյո՞ք պետք է հայտարարագրել աշխատավարձը, եթե այն չի գերազանցում 300 հազար դրամի շեմը

300 հազար դրամի շեմը չի վերաբերում հարկվող եկամուտներին: Հետեւաբար, աշխատավարձը պետք է ներառել հայտարարագրում, քանի որ այն համարվում է հարկվող եկամուտ:

Շարունակությունը ArmLur.am կայքում

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ Է ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Կառավարությունն իր այսօրվա նիստում մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին որոշում կայացրեց:

Հիմնավորման մեջ նշվում է, որ այս որոշումը պայմանավորված է գնման ընթացակարգով «Ջի Էմ Փի ինթերնեյշնլ Ջի Էմ Բի Էյջ արքիթեքթս ընդ էնջինիերս» ընկերությանը պատվիրված գլխավոր հատակագծի հայեցակարգի հիման վրա, ինչպես նաեւ նույն ընկերության հետ համագործակցությամբ՝ Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի հաստատման համար անհրաժեշտ փաթեթի պատրաստման ծառայությունները ոլորտի առաջատար կազմակերպությունից՝ «ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք բերելու անհրաժեշտությամբ:

ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեն դիմել է «ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ընկերություն՝ վերջինիս կողմից գնառաջարկ ստանալու նպատակով: Հաշվի առնելով, որ «ՆՍԹարքիթեքչուր ստուդիո» ընկերության կողմից ներկայացված գնառաջարկն այլ ստացված գնառաջարկի համեմատ ավելի ցածր է, ինչպես նաեւ հիմք ընդունելով ՀՀ-ում քաղաքաշինական եւ ճարտարապետական նախագծման բնագավառում «ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ընկերության ներգրավված մասնագետների փորձն ու կատարած աշխատանքները, որոշվել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի հաստատման համար անհրաժեշտ փաթեթի պատրաստման աշխատանքները պատվիրակել«ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ընկերությանը:

Նախագծի ընդունման դեպքում ԿԳՄՍՆ-ի բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեին կթույլատրվի մեկ անձից գնման ընթացակարգով «ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ընկերությունից գնել գլխավոր հատակագծի հաստատման համար անհրաժեշտ փաթեթի պատրաստման ծառայություններ, ինչը հնարավորություն կտա պատշաճ կերպով ապահովելու ծրագրի հետ կապված բնականոն աշխատանքները եւ շարունակական զարգացումը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 23 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԱՏՎԵՑ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ

Կառավարությունն իր երեկվա՝ հունվարի 23-ի նիստում, գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծման մաքսատուրքից ազատեց «ՈԼՎԵՐԻՆ Ե.Ա.Դ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Այս ընկերության կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել բարձրորակ զրահասաղավարտների արտադրության համար:

Արտադրությունն իրականացվելու է ՀՀ Արմավիրի մարզում: Ընկերությունը հիմնադրվել է 2020 թվականին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 904.8 մլն դրամի ներդրում հումքի ձեռքբերման համար:

Ներկայումս առկա է 8 աշխատատեղ 279 հազ դրամ միջին ամսական աշխատավարձով: Ներդրումային ծրագրի շրջանակներում մինչեւ 2027 թվականը նախատեսվում է աշխատատեղերի թիվը հասցնել մինչեւ 20-ի՝ 293 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով:

Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 904.8 մլնդրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 45 մլն դրամ:

ՀԱՏՈՒԿ ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Պետական եկամուտների կոմիտեն հարկ վճարողներին հիշեցնում է, որ հատուկ հարկման համակարգերում 2025 թվականի հունվարի 1-ից գործունեություն իրականացնելու հայտարարությունը ներկայացնելու վերջնաժամկետը 2025 թվականի փետրվարի 20-ն է: Նշված ժամկետը սահմանված է շրջանառության հարկով հարկման համակարգի գծով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ, իսկ միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի գծով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 267-րդ հոդվածներով: Այս մասին հայտնում են ՊԵԿ-ից:

Հարկման համակարգի ընտրության հետ կապված խնդիրներից զերծ մնալու նպատակով 2025 թվականի հունվարի 1-ից հատուկ հարկման համակարգում գործունեություն իրականացնելու ցանկություն ունեցող հարկ վճարողներին առաջարկվում է համապատասխան հայտարարությունը ներկայացնել օրենսդրությամբ սահմանված ժամկետում, բացառապես էլեկտրոնային եղանակով, հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով: Իսկ նոր ստեղծված կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը համապատասխան հայտարարությունը պետք է ներկայացնեն պետական գրանցում ստանալուց կամ հաշվառվելուց հետո՝ 20 օրվա ընթացքում:

ՆԻԿՈՏԻՆԱՅԻՆ ԲԱՐՁԻԿՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՈՒՄ

ZYN–Ը ԼԻԱԶՈՐԵԼ Է ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

ԱՄՆ-ի Սննդամթերքի եւ դեղորայքի վերահսկողության վարչությունը թույլատրեց ZYN նիկոտինային բարձիկների շուկայավարումը ծխախոտային արտադրանքի նախաշուկայական դիմումի (PMTA)՝ իրականացված ծավալուն գիտական ուսումնասիրությունից հետո: Սա առաջին դեպքն է, որ գործակալությունը լիազորել է նիկոտինային բարձիկ կոչվող արտադրանքը, ինչն իրենից ներկայացնում է նիկոտին պարունակող մանրաթելերից պատրաստված փոքրիկ պարկ՝ նախատեսված մարդու լնդերի եւ շրթունքի միջեւ տեղադրելու համար:

FDA-ը որոշում է կայացրել, որ շուկայավարման թույլտվություն ստացող կոնկրետ ապրանքները համապատասխանում են հանրային առողջության չափանիշներին, որը օրենքով պահանջվում է 2009 թվականի՝ «Ընտանիքում ծխելու կանխարգելման եւ ծխելու դեմ պայքարի» կարգավորմամբ: Այս չափանիշը հաշվի է առնում արտադրանքի ռիսկերն ու օգուտները ամբողջ բնակչության համար:

Ի թիվս մի քանի հիմնական նկատառումների՝ գործակալության գնահատականը ցույց է տվել, որ սիգարետի ու անծուխ արտադրանքների (ինչպիսիք են խոնավ սնուսը) մեծ մասի համեմատ վնասակար բաղադրիչների էականորեն ավելի ցածր քանակության պատճառով, թույլատրված արտադրանքը պարունակում է քաղցկեղի եւ այլ լուրջ հիվանդությունների ավելի ցածր ռիսկ: Դիմում ներկայացնելիս նաեւ ապացույցներ են ներկայացվել հետազոտությունից, որը ցույց է տալիս, որ չափահասների մի զգալի մասը, ովքեր օգտագործում են սիգարետ եւ/կամ անծուխ ծխախոտային արտադրանք, ամբողջությամբ անցել են նոր թույլատրված նիկոտինային բարձիկներին:

«Շուկայավարման թույլտվություններ ստանալու համար FDA-ը պետք է բավարար ապացույցներ ունենա, որ նոր արտադրանքի դեպքում բնակչության առողջության համար օգտակար հատկություններն ավելի շատ են, քան ռիսկերը», - ասում է, FDA-ի Ծխախոտային արտադրանքի կենտրոնի Գիտության գրասենյակի տնօրեն Մեթյու Ֆարելլին, բ.գ.թ.: «Տվյալ դեպքում տվյալները ցույց են տալիս, որ նիկոտինային բարձիկների այս արտադրանքը համապատասխանում է այդ նշագծին՝ օգուտ տալով չափահասներին, ովքեր օգտագործում են սիգարետ եւ/կամ անծուխ ծխախոտային արտադրանք եւ ամբողջությամբ անցնում են այդ ապրանքներին»:

Բացի այդ, FDA-ը պարզել է, որ դիմումը ցույց է տվել, որ այս նիկոտինային բարձիկները կարող են օգուտ տալ սիգարետ եւ/կամ այլ անծուխ արտադրատեսակներ օգտագործող չափահասներին, ինչը բավարար է արտադրանքի ռիսկերը գերազանցելու համար, ներառյալ՝ երիտասարդների կողմից դրանց օգտագործումը: Որպես իր գնահատման մաս՝ FDA-ը վերանայել է երիտասարդների կողմից արտադրանքի օգտագործման ռիսկի վերաբերյալ տվյալները եւ պարզել, որ երիտասարդների կողմից նիկոտինային բարձիկների օգտագործման մակարդակը շարունակում է ցածր մնալ՝ չնայած վերջին տարիներին աճող վաճառքներին: Օրինակ՝ 2024թ.՝ Ծխախոտի վերաբերյալ ազգային երիտասարդական հարցման տվյալներով ԱՄՆ միջին եւ ավագ դպրոցի աշակերտների 1.8%-ը հայտնել է, որ ներկայումս օգտագործում է նիկոտինային բարձիկներ:

«Վճռական նշանակություն ունի, որ արտադրողն այս արտադրատեսակները պատասխանատու կերպով առեւտրայնացնի՝ կանխելու երիտասարդների կողմից դրանց օգտագործումը», նշում է Սննդամթերքի եւ դեղորայքի վերահսկողության վարչության ղեկավար, մ.գ.թ. Բրայան Քինգը: «Չնայած տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդների կողմից օգտագործման մակարդակը շարունակում է ցածր մնալ, FDA-ը շարունակում է շուկայի մշտադիտարկումն ու տրամադրված է դիմել գործնական քայլերի, եթե անհրաժեշտ լինի, հանրային առողջապահության բարեկեցության համար»:

FDA-ն ուշադիր հետեւելու է այս ապրանքների շուկայավարմանը եւ օգտագործմանը: Երիտասարդների վրա այս ապրանքների գովազդի ազդեցությունը նվազեցնելու համար թույլտվությունները կիրառում են թվային, հեռուստատեսային եւ ռադիո ոլորտներում շուկայավարման խիստ սահմանափակումներ, ներառյալ միջոցներ՝ երաշխավորելու համար, որ գովազդն ուղղված է 21 տարեկան եւ ավելի չափահասներին եւ գովազդի միջոցով թիրախավորված լսարանին, որոնք վերահսկվում եւ չափվում են արտադրողի կողմից: Ընկերությունը նաեւ նշել է, որ իրենք մտադիր են լրացուցիչ միջոցներ ձեռնարկել երիտասարդների հասանելիությունը սահմանափակելու, երիտասարդության համար արտադրանքի գրավչությունը նվազեցնելու եւ երիտասարդների վրա արտադրանքի պիտակավորման եւ գովազդի ազդեցությանը սահմանափակելու համար:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՈՐԱԿԸ ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ՞

ՀԱՅԱՍՏԱՆԸ 45 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ՎԱՐԿ ԿՎԵՐՑՆԻ

Կառավարությունը հունվարի 23-ի նիստում հավանություն տվեց Ասիական զարգացման բանկի հետ առողջապահական համակարգի զարգացմանն ուղղված վարկային համաձայնագրի ստորագրման առաջարկությանը:

Ասիական զարգացման բանկի հետ «Առողջապահության որակի բարելավման ծրագրի» շրջանակներում վարկային պայմանագիր կնքելու վերաբերյալ նախագիծը ներկայացրեց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Նրա խոսքով՝ Ասիական զարգացման բանկի կողմից առաջարկվող արդյունքահեն վարկավորման ծրագրով նախատեսվում է ներգրավել 45.3 մլն եվրո արժողությամբ վարկ:

«Վարկային միջոցները բաշխված են տարիների մեջ, եւ մենք մինչեւ 2028 թվականը պետք է կարողանանք ապահովել ամեն մի արդյունքային ցուցանիշի դրական ելքը, որի պարագայում հաջորդ տարվա ընթացքում վարկային միջոցները կտրամադրվեն», - պարզաբանեց Ավանեսյանը:

Վարկային միջոցներն ուղղվելու են առողջապահական հաստատությունների կառուցման ու բարելավման, ծառայությունների որակի գնահատման եւ հաշվետվողականության թվայնացման եւ ինստիտուցիոնալացման, բժշկական հաստատությունների լիցենզավորման, առողջապահության ոլորտի մարդկային կապիտալի զարգացման, հեռաբժշկության պիլոտային ծրագրի իրականացման, էլեկտրոնային առողջապահության գործիքների կիրառության բարելավման խթանմանը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՊԱՏԵՐԱԶՄԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Է...». ՕՐՈՒԵԼ

ՆՐԱ «ՄԵԾ ԵՂԲԱՅՐԸ...» ՀԵՏԵՎՈՒՄ Է ԲՈԼՈՐԻՆ

«Սուրբ Ջորջ», «մի սերնդի խիղճ», «մարգարե»... Ջորջ Օրուելի ժառանգության 20 հատորներն այսօր ամբողջ աշխարհում ուսումնասիրվում են դպրոցներում ու համալսարաններում: Նրա գրքերը թարգմանվել են 65 լեզուներով, դրանց հիման վրա նկարահանվել են ֆիլմեր ու պիեսներ, իսկ «1984» վեպի ընդհանուր տպաքանակը միայն Անգլիայում գերազանցել է 40 միլիոնը:



«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել Էրիկ Արթուր Բլեյրի կամ նույն ինքը՝Ջորջ Օրուելի հետաքրքիր մտքերը:

1. Մարդու ամենավատ թշնամին նրա նյարդային համակարգն է: Ցանկացած պահի ներքին լարվածությունը կարող է արտացոլվել արտաքինում:

2. Ինչ-որ կերպ հնարավոր է կառուցել գաղտնի աշխարհ, որտեղ կարող ես ապրել ուզածիդ պես: Դրա համար միայն հաջողություն է պետք, մեկ էլ ճարպկություն ու խիզախություն պիտի ունենաս:

3. Անգործունակ պետությունը վաղ թե ուշ պարտվում է, իսկ գործունակությունը չի կարող հիմնվել պատրանքների վրա: Բացի այդ, գործունակ լինելու համար անհրաժեշտ էր դասեր քաղել անցյալից, նշանակում է՝ բավական ճշգրիտ գաղափար ունենալ այն մասին, թե ինչ է եղել անցյալում:

4. Մահը երբեք չի գալիս, երբ նրան սպասում ես:

5. Կա միայն չորս միջոց, որով իշխող խումբը կարող է գահընկեց արվել: Կամ նվաճվում է դրսից, կամ անարդյունավետ է ղեկավարում, եւ զանգվածները ցանկանում են ապստամբել, կամ դա թույլ է տալիս ձեւավորել ուժեղ ու դժգոհ միջին դաս, կամ կորցնում է ինքնավստահությունն ու կառավարելու պատրաստակամությունը: Այս պատճառները չեն ազդում առանձին-առանձին, եւ որպես կանոն՝ չորսն էլ ինչ-որ չափով ներկա են: Իշխող դասը, որը կարող է պաշտպանվել բոլորից, մշտապես մնում է իշխանության գլխին: Վերջին հաշվով որոշիչ գործոնը բուն իշխող դասակարգի հոգեբանական վիճակն է:

6. Եթե ուզում ես գաղտնիք պահել, այն պետք է թաքցնես քեզնից: Պետք է իմանաս, որ կա, բայց քանի դեռ անհրաժեշտ չէ, թույլ տաս, որ գիտակցությանդ մեջ մուտք գործի այն տեսքով, որին կարելի է անուն տալ:

7. Ինքնին ցավը երբեմն բավարար չէ: Լինում են դեպքեր, երբ մարդն ընդդիմանում է ցավին մինչեւ մահվան պահը: Բայց բոլորի համար էլ կա ինչ-որ անդիմադրելի բան, մի բան, որ հնարավոր չէ նախատեսել: Խիզախությունն ու երկչոտությունը կապ չունեն: Երբ ընկնում ես բարձունքից, պարանից կառչելը վախկոտություն չէ: Երբ ընկնում ես խոր ջրերի մեջ, թոքերդ օդով լցնելը վախկոտություն չէ: Դա ընդամենը բնազդ է, որ անհնար է ոչնչացնել:

8. Ազատությունը երկուսին գումարած երկու՝ հավասար է չորսի ասելու հնարավորությունն է: Եթե դա թույլատրվի, մնացած ամեն ինչ կբխի դրանից:

9. Իշխանությունը Կուսակցությանը պետք է ոչ թե իր, այլ մեծամասնության բարեկեցության համար: Իշխանություն պետք է, որովհետեւ մարդկանց մեծամասնությունը թուլամորթ, երկչոտ արարածներ են, որոնք չեն կարող դիմանալ ազատությանը, չեն կարող նայել ճշմարտության աչքերին. նրանց պետք է կառավարեն եւ կանոնավոր ստեն նրանք, ովքեր իրենցից ուժեղ են:

10. Ակնհայտ ճշմարտություն է, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար եւ Արարչից օժտված են անօտարելի իրավունքով, որոնցից է կյանքի, ազատության ու երջանկության ձգտման իրավունքը: Այդ իրավունքները պահպանելու համար մարդիկ ստեղծում են կառավարություններ, որոնք իշխանություն են ձեռք բերում կառավարվողների համաձայնությամբ: Երբ կառավարման ձեւը չի ծառայում այդ նպատակին, ժողովուրդն իրավունք ունի փոխել կամ վերացնել այն եւ հաստատել նոր Կառավարություն:

11. Մինչեւ չգիտակցեն, երբեք չեն ապստամբի, մինչեւ չապստամբեն, չեն կարող գիտակից դառնալ:

12. Տհաճ մարդուն ժայռից հրելը ոչ մի խնդիր չի լուծում:

13. Մի անիծյալ պատերազմը միշտ հաջորդում է մյուսին:

14. Հնարավոր է պատկերացնել մի հասարակություն, որտեղ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ, անձնական սեփականության ու ճոխությունների առումով, հավասարապես կբաշխվի, մինչդեռ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ կմնա փոքրաթիվ արտոնյալների ձեռքին:

ԱՆՆԱ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ

2700 ՖՐԱՆՍԵՐԵՆ ԳԻՐՔ՝ ՀՀ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը հանդիպել է Ֆրանսիացի գրող Սիլվեն Տեսսոնի գլխավորած պատվիրակությանը:

Պատվիրակության կազմում էին Ֆրանսիայի «Մարդասիրական մարտահրավերներ» ասոցիացիայի նախագահ Ալեն Բուենեն, Ֆրանսիական հրատարակիչների ասոցիացիայի (SNE) նախագահ Վենսան Մոնտանը, SNE-ի տնօրեն Ռենո Լեֆեւրը, ֆոտոլրագրող Անտուան Ագուջյանը:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի եւ համագործակցության հարցերով խորհրդական Քսավիե Ռիշարը:

Սիլվեն Տեսսոնի եւ Վենսան Մոնտանի հովանավորությամբ 2700 կտոր ժամանակակից ֆրանսալեզու գիրք կտրամադրվի ՀՀ գրադարաններին (76 հաստատություն):

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը ողջունել է հյուրերին եւ շնորհակալություն հայտնել նախաձեռնության համար:

«Կրթության եւ մշակույթի ոլորտներում մենք այսօր ակտիվ բարեփոխումների փուլում ենք եւ այս համատեքստում շատ ենք կարեւորում միջազգային փորձի ուսումնասիրումն ու տեղայնացումը՝ ի նպաստ մեր պետության զարգացման: Կարեւորում ենք նաեւ Հայաստանում տարբեր ծրագրերով ֆրանկոֆոնիան զարգացնելու հնարավորությունները, եւ ձեր նախաձեռնությունը գալիս է լրացնելու այս քաղաքականությունը»,- ասել է Դանիել Դանիելյանը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են մշակույթի, գրականության շրջանակում համագործակցության հեռանկարները, կարեւորել փորձի փոխանակումը, ստեղծարար ներուժի բացահայտումն ու զարգացումը:

Ֆրանսիացի գործընկերները ներկայացրել են նաեւ Փարիզի գրքի միջազգային փառատոնը՝ կարեւորելով Հայաստանի մասնակցության հնարավորությունը համագործակցության զարգացման տեսանկյունից:

Դանիել Դանիելյանն իր հերթին ներկայացրել է ԿԳՄՍ նախարարության Գրքի երեւանյան միջազգային փառատոնը, ձեռքբերումները, ինչպես նաեւ ծրագրի զարգացման հեռանկարները: Այս համատեքստում նախարարի տեղակալը կարեւորել է Ֆրանսիայի փորձառությունը մշակույթի կառավարման ոլորտում՝ վստահություն հայտնելով, որ համագործակցությունը կնպաստի իրականացվող տարբեր միջոցառումների եւ ծրագրերի արդյունավետության բարելավմանը:

Այցի շրջանակում հյուրերը հանդիպել են նաեւ հայ հրատարակիչների եւ ֆրանսերեն սովորողների հետ:

ՀՀ ԿԳՄՍՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՎԱՐՏՎԵՑ ՇԱԽՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոցում այսօր՝ հունվարի 22-ին, անցկացվեց Հայաստանի շախմատի տղամարդկանց 85-րդ եւ կանանց 80-րդ առաջնությունների վերջին խաղափուլը:

Տղամարդկանց պայքարում գրոսմայստեր Ռոբերտ Հովհաննիսյանը կարիերայում 3-րդ անգամ (2011, 2024, 2025) նվաճեց շախմատի Հայաստանի չեմպիոնի տիտղոսը:

Կանանց պայքարում հաղթող ճանաչվեց կանանց շախմատի միջազգային վարպետ Սուսաննա Գաբոյանը՝ 4-րդ անգամ նվաճելով շախմատի Հայաստանի չեմպիոնի տիտղոսը (2015, 2021, 2024, 2025 թվականներին):

ՌՈԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ ՉԵՄՊԻՈՆ

Հայաստանի շախմատի տղամարդկանց առաջնության 2025 թվականի չեմպիոնը Ռոբերտ Հովհաննիսյանն է:

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանն ընթացող Հայաստանի շախմատի տղամարդկանց 85-րդ առաջնության վերջին տուրում Ռոբերտ Հովհաննիսյանը մրցեց Մամիկոն Ղարիբյանի հետ: Հովհաննիսյանը հանդես էր գալիս սպիտակ խաղաքարերով եւ հաղթանակի հասավ: Նա վաստակեց 6,5 միավոր եւ դարձավ երկրի չեմպիոն իր կարիերայում 3-րդ անգամ:

ՌԱՆՈՍԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Հրանտ-Լեոն Ռանոսը նոր ակումբ է տեղափոխվել:

Հայազգի ֆուտբոլիստը Մյունխենգլադբախի «Բորուսիա»-ից վարձավճարով հանդես կգա «Կայզերսլաուտերնում»: Կայզերսլաուտերն քաղաքի համանուն թիմը հանդես է գալիս երկրորդ Բունդեսլիգայում: Թիմն այժմ մրցաշարային աղյուսակում 5-րդն է:

Հրանտ-Լեոն Ռանոսը Մյունխենգլադբախի «Բորուսիա» էր տեղափոխվել 2023 թվականին եւ այս տարիների ընթացքում ընդհանուր առմամբ մասնակցել է միայն 12 խաղի:

● *Հունվարի 26-ին՝ ժամը 19:00-ին, Երգի պետական թատրոնում կլինի մեծ պրեմիերա՝ «Կոմիտաս» երաժշտական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-5.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:
Սյուզաննա Մարգարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր) կամ խնամակալի ցանկությամբ տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչեւ երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերցվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողն այն կարող է ստանալ հերթականությամբ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում եւ որքա՞ն ժամանակով կարող է հետաձգվել քաղաքացու ուղեգրումը տուն-ինտերնատ:
Կարեն Վիրաբյան (45 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու ուղեգրումը տուն-ինտերնատ կարող է հետաձգվել՝ քաղաքացու կամ նրա խնամակալի կողմից սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) ներկայացված դիմումի (հիմնավոր պատճառների՝ առողջական խնդիրներ, հարազատի մահ, եղանակային պայմաններ եւ այլն) հիման վրա, մինչեւ 6 ամիս ժամկետով:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացին պետք է ներկայանա բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի շուրջօրյա հաստատություն (տուն-ինտերնատ) ուղեգիրը ստանալու օրվանից 7-օրյա ժամկետում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Անորա» դրաման, որում նկարահանվել է նաեւ հայ դերասան Վաչե Թովմասյանը, Ամերիկյան կինոակադեմիայի «Օսկար» մրցանակաբաշխության «Տարվա լավագույն ֆիլմ» անվանակարգում է:

Ֆիլմը ներկայացված է նաեւ լավագույն ռեժիսոր, լավագույն դերասանուհի, երկրորդ պլանի լավագույն դերասան եւ լավագույն օրիգինալ սցենար անվանակարգերում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 -2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 -18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.1.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*